Հաշվետվություն

Միջառարկայական կապի ստեղծմանն ու հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների շարք





Միջառարկայական կապի ստեղծում՝ «Գեղարվեստական կրթության հիմնախնդիրները հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության մեջ (XIX դ. – XX դարասկիզբ)» և «Կառավարում» գրքերի շրջանակում

- **Նպատակը.**

  Միջոցառման նպատակն է միջառարկայական կապի ստեղծումն ու հետազոտական կարողությունների զարգացումը:

- **Խնդիրները.**

- Ուսանողների մոտ գիտության հանդեպ մոտիվացիայի բարձրացում,
- Ժամանակակից հեղինակների՝ հետազոտողների հետ անմիջական փոխհարաբերությունների ձևավորում,
- Հետազոտական կարողությունների զարգացում համապատասխան հանձնարարականների միջոցով.

- ✓ Պլանային ընթերցանության միջոցով՝ նյութից անհրաժեշտ տեղեկատվության ֆիլտրման կարողություն (***հարցաթերթ՝ հարց 1***),
  - ✓ Վերլուծելու կարողություն՝ սեփական տեսակետները առաջադրելու և հիմնավորելու կարողություն (***հարցաթերթ՝ հարց 3,4***),
  - ✓ Նորարարությունները ֆիլտրելու և մասնագիտական ասպարեզում ներդնելու կարողություն (**հարցաթերթ՝ հարց 5**),
- Հեղինակած գրքերի վերաբերյալ հետազոտողներին/հեղինակներին հասանելի դարձնել ուսանողների կարծիքները, անհատական տեսակետները գրքերի վերաբերյալ:

Հանդիպման մասնակիցների ընտրանքը.

Հանդիպում-քննարկմանը մասնակցել են թվով 12 ուսանողներ՝ Համալսարանի երեք՝ Բանասիրության և մասնկավարժության, Տնտեսագիտության կառավարման և ինֆորմատիկայի և Իրավագիտության ֆակուլտետների առկա և հեռակա համակարգերից (*Հավելված 1՝ Հանդիպում-քննարկման մասնակիցների ցանկ*):

Ընթացակարգը.

- Հանդիպում-քննարկման կայացման մասին տեղեկատվության տարածում լսարաններում՝ Համալսարանի առկա/հեռակա համակարգի ուսանողների շրջանում:
- Ընթերցողների համար՝ «Հարց հեղինակից» հարցաթերթերի կազմում և տարածում՝ ընթերցողների շրջանում:
- Լրացված հարցաթերթերի հավաքագրում, վերլուծություն:
- Հանդիպում-քննարկման իրականացում:
- Կայացած հանդիպում-քննարկման մասին տեղեկատվության հրապարակում Հյուսիսային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) Որակի ապահովման վարչության (ասյուհետ՝ Վարչություն) ֆեյսբուքյան էջում՝ Համալսարանի շահակիցների շրջանում իրազեկվածության ապահովման համար:

- Սույն թվականի ապրիլի 4-ին Որակի ապահովման վարչության, Համալսարանի գրադարանի և Ուսանողական գիտական ընկերության (այսուհետ՝ ՈԻԳԸ) ներկայացուցիչների կողմից՝ համալսարանի առկա և հեռակա համակարգերում սովորող ուսանողների շրջանում իրականացվեց տեղեկատվության տարածում լսարաններում՝ «Գեղարվեստական կրթության հիմնախնդիրները հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության մեջ (XIX դ. – XX դարասկիզբ)» և «Կառավարում» գրքերի հեղինակների և ընթերցողների միջև հանդիպում-քննարկում իրականացնելու վերաբերյալ: Ուսանողները մեծ հետաքրքրասիրություն դրսևորեցին կայանալիք միջոցառման վերաբերյալ և հայտագրվեցին՝ ծանոթանալով միջացառման նպատակին և պայմաններին: Ուսանողներին տրամադրվեցին համապատասխան գրքերը՝ ընթերցելու և գրքերին հանգամանալից ծանոթանալու նպատակով:

- Որակի ապահովման վարչության կողմից կազմվեցին «Հարց հեղինակից» հարցաթերթերը (*Հավելված 2՝ Հարց հեղինակ Ա. Հարությունյանից*, *Հավելված 3՝Հարց հեղինակ Ա. Ճուղուրյանից*), որոնք գրքերի հետ միասին տրամադրվեցին ուսանողներին՝ հեղինակների կողմից տրված հարցերին պատասխանելու և սեփական տեսակետները արտահայտելու նպատակով:

- Ուսանողների կողմից հարցաթերթերը լրացվելուց հետո՝ դրանք հավաքագրվեցին Վարչության կողմից և փոխանցվեցին Համալսարանի գրադարանի պատասխանատու՝ Ա. Սահակյանին: Վերջինիս կողմից կատարվեց հարցաթերթերի վերլուծություն (*Հավելված 4՝ Հարցման արդյունքների վերլուծություն՝ Միջառարկայական կապերի ստեղծումը՝ կրթության կարևոր բաղադրիչ):*

Գրքերի հեղինակների և ընթերցողների միջև հանդիպում-քննարկում

2022թ-ի հուլիսի 13-ին, միջոցառման պատասխանատուների ձեռնարկմամբ տեղի ունեցավ հանդիպում-քննարկում՝ «Գեղարվեստական կրթության հիմնախնդիրները հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության մեջ (XIXդ. – XX դարասկիզբ)» և «Կառավարում» գրքերի հեղինակների և ընթերցողների միջև: Հարց ու պատասխանի միջոցով ուսանողները ստացան իրենց հետաքրքրող հարցերի սպառիչ պատասխանները: Յուրաքանչյուրը ներկայացրին իրենց կարծիքներն ու տեսակետները:

Միջոցառման արդյունքների վերլուծություն

Միջոցառման ընթացքում ծավալվեց ակտիվ քննարկում ուսանողների և հեղինակների միջև: Ուսանողներն իրենց նախապես պատրաստած հարցերն ուղղեցին հեղինակներին և ստացան բավարար պատասխաններ: Հարց ու պատասխանից հետո, ուսանողներն հանդես եկան առաջարկներով, մասնավորապես՝

- Միջառարկայական կապի ստեղծմանն ու հետազոտական կարողությունների զարգացանն ուղղված միջոցառումների շարունակականության ապահովում:
- Համալսարանի ֆակուլտետների ուսանողների միջև՝ ոչ մասնագիտական գրականության ուսումնասիրման նմանօրինակ միջոցառումների կազմակերպման հաճախակիության ապահովում:
- Ավելի լայնամասշտաբ ձևաչափով հանդիպում-քննարկումների կազմակերպում:
- Քննարկման ավարտին առաջարկվեց ուսումնասիրել ևս մեկ գիրք՝ հետագայում նմանօրինակ հանդիպում կազմակերպելու համար:

Մասնակիցները փաստեցին նաև, որ անկախ իրենց ընտրած մասնագիտությունից, երկու գրքերն էլ շատ բովանդակալից և ուսանելի էին: Հավաստիացրին, որ ենագրություններից ձեռք բերված գիտելիքները հետագայում կկիրառեն և՛ առօրյա կյանքում, և՛ իրենց մասնագիտական բնագավառներում:

Միջոցառումը իրականացվեց համագործակցությամբ՝ Հյուսիսային համալսարանի Որակի ապահովման վարչություն

Գիտական հետազոտությունների և նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթական կենտրոն

Գրադարանի պատասխանատու՝

Ուսանողական գիտական ընկերություն:

Հավելված 1

Հավելվածներ

Հանդիպում-քննարկման մասնակիցների ցանկ

Միջառարկայական կապի ստեղծման և հետազոտական կարողությունների զարգացման նպատակով իրականացվող համալիր միջոցառում

«Կառավարում»

Հեղինակ՝ Արմեն Ճուղուրյան

N	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Կուրս
1.	Մարիամ Մարգարյան	Իրավագիտություն	3
2.	Պերճուհի Հայրապետյան	Իրավագիտություն	3
3.	Լիլիթ Գրիգորյան	Իրավագիտություն	2
4.	Կարինե Ավալյան (մագիստր.)	Տարրական մանկավարժություն	2
5.	Նունե Այվազյան	Ն/Դ մանկավարժություն	4
6.	Խանում Մելքոնյան	Ն/Դ մանկավարժություն	4

«Գեղարվեստական կրթության հիմնախնդիրները

հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության մեջ (XIX դ. – XX դարասկիզբ)»

Հեղինակ՝ Արմեն Հարությունյան

N	Անուն, ազգանուն	Մասնագիտություն	Կուրս
1.	Սրբուհի Սարգսյան	Իրավագիտություն	3
2.	Կարինե Մկրտչյան	Իրավագիտություն	3
3.	Արմինե Հովհաննիսյան	Հոգեբանություն	4
4.	Անահիտ Ալեքսանյան	Մանկավարժություն	3
5.	Նարինե Նիկողոսյան	Ն/Դ մանկավարժություն	4
6.	Սրբուհի Սարգսյան	Ն/Դ մանկավարժություն	4
7.	Նունե Այվազյան	Ն/Դ մանկավարժություն	4
8.	Խանում Մելքոնյան	Ն/Դ մանկավարժություն	4

Հավելված 2

«Գեղարվեստական կրթության հիմնախնդիրները հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության մեջ (XIX դ. – XX դարասկիզբ)»

Հեղինակ՝ Արմեն Հարությունյան

Հարց հեղինակից

1. Ձեզ դուր եկա՞վ այս գիրքը:
- Այո
- Ոչ

2. Գիրքը հեշտ ընթերնելի է, թե՞ ոչ /եթե ոչ, ապա ինչու՞/:
- Այո
- Ոչ

_____
_____
_____

3. Հնարավո՞ր եք համարում արդյոք ժամանակակից անձի ձևավորումը և զարգացումն առանց պատշաճ գեղարվեստական զարգացման:

_____
_____
_____
_____

4. Գեղեցկության չափանիշները՝ Ձեր կարծիքով:

_____
_____
_____
_____

5. Ընթերցված նյութում կա՞(ն) հատված(ներ), որ(ոնք)ը կարող եք հետագայում կիրառել Ձեր մասնագիտական ասպարեզում:

_____
_____
_____
_____

6. Խորհուրդ կտա՞ք Ձեր ընկերներին ընթերցել այս գիրքը: /Հիմնավորել պատասխանը/

○ Այո

○ Ոչ

_____

_____

_____

_____

Հարց հեղինակին.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Անուն ազգանուն ----------

Բաժին---------- առկա/հեռակա կուրս ----------

Հեռախոսահամար----------

ՈՐԱԿԻ **ԱՊԱՀՈՎՄԱՆ** ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հավելված 3

«Կառավարում»

Հեղինակ՝ Արմեն Ճուղուրյան

Հարց հեղինակից

1. Ձեզ դուր եկա՞վ այս գիրքը:
○ Այո
○ Ոչ

2. Գիրքը հեշտ ընթերնելի է, թե՞ ոչ /եթե ոչ, ապա ինչու՞/:
○ Այո
○ Ոչ

_____
_____
_____

3. Ինչպե՞ս վարվել ձախողված կառավարչի հետ, ով չի կարողացել գործառույթներն իրականացնել պատշաճ ձևով:

_____
_____
_____
_____

4. Ինչպե՞ս վարվել ձախողված կառավարվող խմբի հետ:

_____
_____
_____
_____

5. Ընթերցված նյութում կա՞(ն) հատված(ներ), որ(ոնք)ը կարող եք հետագայում կիրառել Ձեր մասնագիտական ասպարեզում:

_____
_____

_____

_____

6. Խորհուրդ կտա՞ք Ձեր ընկերներին ընթերցել այս գիրքը: /Հիմնավորել պատասխանը/

○ Այո

○ Ոչ

_____

_____

_____

_____

Հարց հեղինակին

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Անուն ազգանուն ----------

Բաժին---------- առկա/հեռակա կուրս ----------

Հեռախոսահամար----------

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հավելված 4

Հարցման արդյունքների վերլուծություն

Միջառարկայական կապերի ստեղծումը՝ կրթության կարևոր բաղադրիչ

Հանդիպման մասնակիցների թիվը՝ 12 հոգի



Հարց 1. Ձեզ դուր եկա՞վ այս գիրքը:

- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո



Հարց 2. Գիրքը հետաքրքրելի է, թե՞ ոչ /եթե ոչ, ապա ինչու՞/:

- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո
- Այո



«Գեղարվեստական կրթության հիմնախնդիրները հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության մեջ (XIX դ. – XX դարասկիզբ)»

- Քանի որ գեղեցիկը բոլորին հետաքրքրում է:
- Աշխատանքը ուշագրավ է երկու իմաստով. Նախ՝ ներկայացնում է այդ ժամանակաշրջանի հայ կրթօջախներում սովորողների դաստիարակության գործունեությունը:
- Այս գիրքը հեշտ ընթերնելի է, հետաքրքիր և բովանդակալից:
- Գիրքը ներկայացնում է 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին հայ կրթօջախներում սովորողների գեղարվեստագեղագիտության դաստիարակության դաստիարակության հարցերը, որոնք ինձ անչափ հետաքրքրեց:

«Կառավարում»

- Գիրքը հեշտ ընթերնելի էր, քանի որ բավականին բազմաբովանդակ էր և հետաքրքիր:
- Գիրքն իր մեջ ներառում է կառավարման գործընթացի ամբողջական կառավարման համակարգերը:
- Որովհետև նախատեսված էր բուհերի ուսանողների համար:

Հարց 3. Հնարավո՞ր եք համարում արդյոք ժամանակակից անձի ձևավորումը և զարգացումն առանց պատշաճ գեղարվեստական զարգացման: /Ա. Հարությունյան/

- Հնարավոր չեմ համարում, քանի որ առանց գեղարվեստական զարգացման անձը չի կարող ձևավորվել:
- Իմ կարծիքով ոչ, քանի որ առանց գեղարվեստական պատշաճ զարգացման հնարավոր չէ անձի ճիշտ ձևավորում և զարգացում:
- Իմ կարծիքով հնարավոր չէ:
- Միայն գեղարվեստական գրականության շնորհիվ է ընդլայնվում անձի մտահորիզոնը, հղկվում գեղագիտական ճաշակը, զարգանում երևակայությունը, ստեղծվում բարոյական հատկանիշներ, առանց որի կյանքն անհնարին է:
- Ժամանակակից անձի ձևավորումը և զարգացումը առանց գեղարվեստական գիտելիքների յուրացմամբ հնարավոր չէ, որովհետև բազմակողմանի զարգացման գործում գեղարվեստական զարգացումը ժամանակի հրամայական է և պարտադիր պայման:
- Ոչ, քանի որ անձի զարգացումը և արվեստը գտնվում են միևնույն հարթակում: Գեղարվեստական զարգացման միջոցով է ձևավորվում անհատի՝ ճաշակը, գեղեցիկ խոսքը, աշխարհայացքը, մտածելակերպը:

Հարց 3. Ինչպե՞ս վարվել ձախողված կառավարչի հետ, ով չի կարողացել գործառույթներն իրականացնել պատշաճ ձևով: /Ա. Ճուղուրյան/:

- Կառավարման մեխանիզմը հիմնվում է կոնսենսուսի և ներքին նախաձեռնողականության վրա (ղեկավարը չի կարող իր տեսակետից ելնելով՝ իր կարծիքը պարտադրի կոլեկտիվի անդամներին):
- Ձախողված կառավարչին խորհուրդ կտայի այս ձեռնարկի համապատասխան բաժինները կրկին ընթերցի, հետևի վարքագծին և կատարի ինքնավերլուծություն:
- Հնարավորության սահմաններում շտկողական օգնություն առաջարկել:
- Կառավարման գործընթաց դիտարկվում է տարբեր մակարդակներում՝ բազմիցս քննարկված և համաձայնեցված որոշումներով:
- Գտնել ձախողման պատճառահետևանքային կապերը, տալ ուղղվելու հնարավորություն:

Հարց 4. Գեղեցկության չափանիշները՝ Ձեր կարծիքով: /Ա. Հարությունյան/

- Տարբեր մարդիկ «Գեղեցիկը» յուրովի են ընկալում: Գեղեցկության չափանիշներն են՝ արտահայտիչ աչքերը, կեցվածքը, բարությունը, զգացմունքայնությունը, ժպիտը, արտաքինը, սիրել և սիրվելու արվեստին տիրապետելը, ճաշակը, առաքինությունը:
- Ճանաչողական գեղեցիկը և վսեմը ներկայացնող, ինչ-որ տեղ նաև հոգեպարար: Եվ, որ ամենից կարևորը ինձ համար՝ գեղագիտական ճաշակ և հոգու ներդաշնակություն:
- Գեղեցկությունը արվեստում և իրականության մեջ դրսևորվող գեղագիտական բարձրագույն արժեքն է, ինչը դիտողին հաճույք է պատճառում:
- Գեղեցկություն, գեղագիտական կատեգորիա, որը նշանակում է օբյեկտի տարբեր ասպեկտների ներդաշնակ համադրություն ու կատարելությունը, ինչը դիտողին գեղագիտական հաճույք է պատճառում:
- Գեղեցկությունը յուրաքանչյուրը ընկալում է յուրովի:
- Նրբաճաշակություն, կրթվածություն, զարգացած անհատ:

Հարց 4. Ինչպե՞ս վարվել ձախողված կառավարվող խմբի հետ:

- Նախ և առաջ պետք է փորձել գտնել խմբի ձախողման պատճառները և թույլ տրված թերությունը և փորձել շտկել դրանք:
- Պետք է կատարել կադրերի փոփոխություն և ամենակարևոը թիմային աշխատանք:
- Անընդհատ վերապատրաստել և մասնագիտանալ:
- Անհրաժեշտ է հստակեցնել նպատակը, փնտրել ճիշտ ճանապարհներ՝ նպատակին հասնելու համար:
- Պետք է կատարել թիմային աշխատանք, որպեսզի կոլեկտիվում չլինեն տարաձայնություններ և խմբային աշխատանքը ունենա իր դրական արդյունքը:

Հարց 5. Ընթերցված նյութում կա՞(ն) հատված(ներ), որոնք կարող եք հետագայում կիրառել Ձեր մասնագիտական ասպարեզում: /Ա. Հարությունյան/

- Այո
- Գեղեցիկը գնահատելը արժեքավոր երևույթ է:
- Այո, մարդկային հասարակությունն իր զարգացման ընթացքում բազում ձեռքբերումներ է ունեցել ստեղծել արժեքային այնպիսի համակարգեր, որոնք բնութագրական են բոլոր ժամանակների ու ժողովուրդների համար:
- Ընթերցված գրականությունից շատ բան սովորեցի, որը կօգնի կիրառել գործնականում:
- «Մանկական խաղերը» մանկապարտեզում կկիրառեի կերպարվեստի պարապմունքների ժամանակ:
- «Ներսիսյան դպրանոցի նոր շենքը» խորագրով հոդվածում խոսվում է երեխաների ճիշտ դաստիարակության և զարգացման մասին: Մեր օրերում եթե չլինեն

անկարգություն, գիշերօթիկ դպրոցներ, հանցագործությունների թիվը գնալով կնվազեր և դա գալիս է սխալ դաստիարակությունից երեխայի հոգեբանությունից:

Հարց 5. Ընթերցված նյութում կա՞(ն) հատված(ներ), որոնք կարող եք հետագայում կիրառել Ձեր մասնագիտական ասպարեզում: /Ա. Ճուղուրյան/

- Կարելի է օգտվել այս գրքից՝ կոլեկտիվի կառավարման գործընթացում:
- Սթրեսների կառավարումը և ընդհանրապես «կառավարում» երևույթի ի հայտ գալը:
- Հասկանալով, թե ինչ դժվարություններ և ռիսկեր կբերեն ռիսկերը և փոփոխություններընն կառավարիչը պետք է շահադրդի այնպիսի մեխանիզմներով, որոնք կմոտիվացնեն անձնակազմին անցնլու փոփոխությունների բարդություններով:
- Սթրեսի կառավարմանը և կարգավորմանը վերաբերող հատվածները կիրառելի կլինեն իրավագիտության ոլորտում՝ մեծ մասամբ խմբի հետ աշխատելիս:
- Փոփոխությունների իրականացման ցանկացած ձևակերպումը պետք է լինի համոզիչ և իրատեսական, այլապես կառավարվող անձնակազմը դժվարակամ կգնա փոփոխությունների:

Հարց 6. Խորհուրդ կտա՞ք Ձեր ընկերներին ընթերցել այս գիրքը /հիմնավորել պատասխանը/: /Ա. Հարությունյան/

- Այո, որովհետև յուրաքանչյուրի պարտքն է ուսումնասիրել վեր հանել և սերունդներին փոխանցել մեր ժողովրդի մշակույթը, որը կարող է նպաստել նոր մշակույթի զարգացմանը:
- Այո, քանի որ գիրքը ոչ միայն ճանաչողական նշանակություն ունի, այն հանդիսանում է շատ լավ ուսումնամեթոդական ձեռնարկ՝ բուհերում սովորողների համար: Խորհուրդ կտամ ընթերցել այն, հուսով եմ ձեզ դուր կգա:
- Այո, քանի որ բազմաբովանդակ գիրք է և գեղարվեստորեն հարուստ է շարադրված:
- Այո: Գրքում խոսվում է արվեստի, դաստիարակության, գեղարվեստական կրթության մասին: Յուրաքանչյուրի պարտքն է ուսումնասիրել, սերունդներին փոխանցել մեր ժողովրդի անցյալի մշակույթը և իրազեկել հասարակությանը:
- Այո: Գիրքը շարադրված է մատչելի, պարունակում է մշակույթին վերաբերող բազմաբովանդակ նյութեր և շատ հեշտ ընթերնելի է:

Հարց 6. Խորհուրդ կտա՞ք Ձեր ընկերներին ընթերցել այս գիրքը /հիմնավորել պատասխանը/: /Ա. Ճուղուրյան/

- Այո: Այս գիրքը, անկախ մասնագիտությունից, կօգնի հասկանալ կառավարման առաձնահատկությունները և հեշտ ներգրավվել աշխատանքային թիմին:
- Այո: Ձեռնարկը պարունակում է բազմաբովանդակ նյութեր, որոնք հետագայում կիրառելի կլինեն, անհրաժեշտ է մեկ անգամ ընթերցել գիրքը:

- Այո: Շատ բազմաբովանդակ էր և՛ բոլոր մասնագիտությունների և՛ աշխատանքների ոլորտում:
- Այո: Հետաքրքիր էր, քանի որ շոշափված են համապատասխան մեխանիզմներ, կառավարման գործառույթներ, պրակտիկ խորհուրդներ:
- Այո: Եվ պատահական չէ, որ յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացվում են ոչ միայն ինքնաստուգման հարցեր, այլև սցենարային վարժանքներ, որոնք հնարավոր է իրագործել թե՛ անհատական, և թե՛ խմբային աշխատանքով:

Հարց հեղինակ՝ Ա. Հարությունյանին:

- Գիտեմ, որ նկարիչ եք, կասեք՝ ինչի՞ց կամ ումի՞ց եք ոգեշնչվում:
- Ինչու՞ ընտրեցիք մանկավարժական ոլորտը, որն էր կապող օղակը: Եվ եթե հնարավորություն լիներ, ի՞նչ նոր մեթոդներ և առաջարկություններ կանեիք, որը չկա գրքում:
- Ինչպե՞ս առաջացավ գրքի ստեղծման միտքը:
- Ինչպե՞ս կարող ենք ձեռք բերել այս հետաքրքիր գիրքը:
- Ե՞րբ և ինչպե՞ս ծնվեց Ձեզ մոտ գիրք գրելու գաղափարը: Նշեք գրքի ստեղծման շարժառիթը:
- Ի՞նչ նշանակություն ունի մշակույթը Ձեր կյանքում:
- Ի՞նչ դեր ունի նկարչությունը Ձեր կյանքում:

Հարց հեղինակ՝ Ա. Ճուղուրյանին:

- Ինչը շարժառիթ հանդիսացավ գրքի ստեղծման համար: